

ք. Երևան

«19» 08 2020թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Վահրամ Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ագարակ» ԲԲԸ-ն, ի դեմս տնօրեն Կարապետ Բարսեղյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև պայմանագրի շրջանակներում կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրը և կատարման ժամկետը սահմանվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև պայմանագրի շրջանակներում կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թ. դեկտեմբերի 1-ը ներառյալ:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի՝ արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 4 Հավելվածում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ բաժնում») նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրությունե բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններե ենթաբաժնում»):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **15 աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված

աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 98904000 (իննսունութ միլիոն ինը հարյուր չորս հազար) ՀՀ դրամ, որից 16484000 (տասնվեց միլիոն չորս հարյուր ութսունչորս հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:³¹ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի

³¹ Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրանմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումները բաժնում» նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4 հավելվածները համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

«ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2,
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ.
ՀՎՀՀ 02698732

Կ Ա Պ Ա Լ Ա Ռ ՈՒ

«Ազարակ» ԲԲԸ
Հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Փարպի
Հեռ.՝ +374232-3-32-22, +37491-40-78-26
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150008007517564
ՀՎՀՀ 05003862

Գլխավոր քարտուղարի տեղակալ՝



Վ. Գասպարյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Տնօրեն՝



Կ. Բարսեղյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

Չափաբաժին 3. Կրթական օբյեկտների հիմնանորոգում-3

**«ԱՇՏԱՐԱԿԻ Ն. ՍԻՍԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ ԵՎ ՏԱՆԻՔԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ ԻՆՏԵՆՆԵՐԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻԿԱՑԻԱՆԵՐԻ
ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԷԼԵՄԵՆՏՆԵՐԻ) ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՆՈՐԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

Հ/Հ	Շիֆր, նորմատիվի համարը	Աշխատանքների, ծախսերի անվանումը և չափման միավորը	Չափման միավորը	Քանակը	Ընդհանուր արժեքը միավորի համար (հազար դրամ)	Ընդհանուր արժեքը (հազար դրամ)
ԲԱԺԻՆ-1						
1. Սանհանգույցների վերանորոգման շինարարական աշխատանքներ						
ՔԱՆԴՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ						
1	E17-22 1-5	Լվացարանների ապամոնտաժում և պահեստավորում	հատ	24.00	1.760	42.240
2	E17-22 1-5	Ասիական թասերի ապամոնտաժում	հատ	36.00	1.760	63.360
3	E46-99	Բետոնե տումբաների քանդում	մ3	19.440	24.638	478.963
4	E46-99	.Ցեմենտ. ավազի հարթաշերտի քանդում	մ3	6.359	24.638	156.673
5	E46-80	Միջնորմների քանդում՝ 100 մմ հաստ.	մ3	27.540	21.118	581.590
6	E46-109	Պատերից հաղձասալի քանդում	100մ2	2.172	140.788	305.792
7	C310-15	Շին աղբի հացաքում և տեղափոխում	տ	86.00	7.040	605.440
ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ						
1	E8-142 15-2	Միջնորմների շարում՝ 100 մմ հաստ. 252.4m2	մ3	25.24	56.315	1421.391
2	E8-59 7-3	Միջնորմների ամրանավորում Φ 10 A500C ամրանով	տ	0.3780	469.293	177.393
3	E11-55 E11-56 40 8-1	Ցեմենտե հարթեցնող շերտի իրականացում	100մ2	2.120	234.647	497.452
4	ի.տ.	Մետաղապլաստե լամինատե ֆիլյոնկայով 0.7*2.1 դռների տեղադրում	մ2	52.92	41.063	2173.054
5	E15-262	Պատերի սվաղում ցեմ. ավազի շաղախով h=2.65 մ.	100մ2	6.038	2.582	15.590
6	E15-90	Պատերի երեսապատում հաղձասալով h=2.65 մ.	մ2	603.75	9.854	5949.519
7	E11-135 30-6	Հատակների երեսապատում կերամիկական սալերով	100մ2	1.980	12.906	25.554
8	E34-389 k0.5 66-1	Կախովի առաստաղի կառուցում գունավոր պլաստիկից	մ2	211.95	6.335	1342.703
9	Ա8-603-1	Կախովի առաստաղի լուսադիֆուզային լուսատուների մոնտաժում	100հատ	0.36	821.264	295.655

10	C310-15	Շին աղբի հացաբում և տեղափոխում	տ	86.00	7.040	605.440
11	E10-289 58-2	Լամինատ ջրակայուն միջնորմների կառուցում դռների հետ միասին	մ2	175.50	28.158	4941.729
12	շուկա	Բռնակ փականներ	կոմպ	36.00	5.867	211.212

ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՍԵՆՅԱԿ

1	E15-250-1 1-AP15-55y-5	Պատերի սվաղում գաջի շաղախով h=2.65 մ.	100մ2	0.812	258.111	209.586
2	E15-664 168-7	Պատերի ներկում լատեքսային ներկով	100մ2	0.812	234.647	190.533
3	E11-55 E11-56 40 8-1	Ցեմենտե հարթեցնող շերտի իրականացում 30մմ հաստությամբ	100մ2	0.143	234.647	33.555
4	E11-191 27-5	Լամինատե հատակ	մ2	14.30	8.212	117.432

Ղռան բացվածքի ուժեղացման կոնստրուկցիաներ (քանակն է՝ 36 հատ)

1	E46-80	Միջնորմային պատի քանդում	մ3	3.60	21.118	76.025
2	E46156	Փ 10 անցքերի շաղախում հատկի մեջ	100հատ	2.880	58.662	168.947
3	E46156	Փ 10 անցքերի շաղախում առաստաղին	100հատ	2.880	58.662	168.947
4	E8-59	4xՓ10A500C ամրանի տեղադրում	տ	0.5760	469.293	270.313
5	E8-59	4xՓ10A500C բարավորի ամրանի տեղադրում	տ	0.1156	469.293	54.250
6	E8-59	Փ6AC-I, ամրանի տեղադրում	տ	0.1256	469.293	58.943
7	E6-170-4	Բետոնացում Բ 15 բետոնով	մ3	5.040	70.394	354.786
8	E8-170	Միջնորմային պատի շարում 100 մմ սալով	մ2	29.16	7.040	205.286
9	E15-250-1 1-AP15-55y-5	Շարվածքի գաջե սվաղի իրականացում	100մ2	0.290	258.111	74.852
10	C310-13	Շին աղբի հավաքում և տեղափոխում	տ	4.68	7.040	32.947
		Ընդամենը				21907.152

Ղռների ապամոնտաժման աշխատանքներ

1	E46-124 32-3	Փայտե՝ 0.70*2.10 մ. չափի ղռան ապամոնտաժում	100մ2	0.662	111.385	73.737
2	E15-262	Ղռան արտաքին շեպերի ցեմենտ.ավազի սվաղ	100մ2	0.104	297.028	30.891
3	C310-13	Շին աղբի հավաքում և տեղափոխում	տ	0.60	4.455	2.673
		Ընդամենը				107.301
		Ընդամենը՝ ԲԱԺԻՆ-1				22014.453

ԲԱԺԻՆ-2

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ԿՈՅՈՒՂԻ.

Սանտեխնիկական խողովակների ապամոնտաժման աշխատանքներ

1	E16-34 6-1	Կոյուղու խողովակների ապամոնտաժում Փ 100	մ	9.60	2.131	20.458
2	E16-33 6-1	Կոյուղու խողովակների ապամոնտաժում Փ 50	մ	12.00	1.420	17.040
3	E16-262 24-2	Ջրի խողովակների ապամոնտաժում Փ 20	մ	5.40	0.710	3.834

4	E17-57 4-1	Ասիական թասերի ապամոնտաժում	լրակազմ	8.00	2.131	17.048
Կոյուղու և ջրամատակարարման խողովակաշար						
1	E16-34 6-1	Կոյուղու խողովակների մոնտաժում Φ 100	մ	104.20	2.628	273.838
2	E16-33 6-1	Կոյուղու խողովակների մոնտաժում Φ 50	մ	201.60	1.892	381.427
3	E16-262 24-2	Ջրի խողովակների մոնտաժում Φ 25 /պոլիպրոպիլեն/	մ	54.75	2.102	115.085
4	E16-262 24-2	Ջրի խողովակների մոնտաժում Φ 20 /պոլիպրոպիլեն/	մ	126.30	2.102	265.483
5	E17-57 4-1	Ասիական թասերի մոնտաժում	լրակազմ	36.00	36.787	1324.332
6	E17-57 4-1	Ջուզարանակոնքի մոնտաժում	լրակազմ	6.00	47.299	283.794
7	E17-22 1-5	Լվացարանների մոնտաժում նոթ	լրակազմ	10.00	26.038	260.380
8	E17-22 1-5	Լվացարանների մոնտաժում առկա	լրակազմ	23.00	8.408	193.384
9	շուկա	Գոյություն ունեցող կոյուղու դիտահորի մաքրում	շուկա	3.00	21.022	63.066
10	E16-36 24-2	Ջրի խողովակների մոնտաժում Φ 25 /պողպատե/	մ	9.00	2.102	18.918
Կոյուղու և ջրամատակարարման խողովակաշարի ձևավոր մասեր						
1	E22-365	Կոյուղու խողովակի ձևավոր մասեր Φ 100	հատ	42.00	1.577	66.234
2	E22-365	Կոյուղու խողովակի ձևավոր մասեր Φ 50	հատ	72.00	1.261	90.792
3	E22-365	Ջրի խողովակի ձևավոր մասեր Φ 25 /պոլիպրոպիլեն/	հատ	48.00	1.577	75.696
4	E22-365	Ջրի խողովակի ձևավոր մասեր Φ 20 /պոլիպրոպիլեն/	հատ	84.00	1.577	132.468
5	E17-22 1-5	Ջրի ծորակների տեղադրում	լրակազմ	33.00	5.256	173.448
6	E22-365	Պողպատ-պոլիպրոպիլեն Φ 25 անցումի տեղադրում	հատ	6.00	1.577	9.462
7	ի.տ.	Φ 25 փականի տեղադրում	հատ	6.00	3.153	18.918
8	ի.տ.	Φ 15 ձկուն միացումների տեղադրում	հատ	75.00	2.102	157.650
9	E17-36 1-9	Հատականցքի տեղադրում Φ50	լրակազմ	12.00	3.153	37.836
10	ի.տ.	Φ 50 սիֆոնների տեղադրում	հատ	33.00	3.153	104.049
		Ընդամենը				4104.640
		Ընդամենը՝ ԲԱԺԻՆ-2				4104.640
ԲԱԺԻՆ-3						
Ջեռուցում						
1. ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ						
1	17-141	Թուջե մարտկոցների ապամոնտաժում	հատ	198.00	1.473	291.654
2	17-140	Թերթավոր մարտկոցների ապամոնտաժում	հատ	85.00	1.473	125.205
3	17--65- B	Պողպատե Φ50 -Φ25 խողովակների ապամոնտաժում	մ	1726.00	0.492	849.192
4	C310- 13	Շին աղբի հավաքում և տեղափոխում	տ	9.20	5.891	54.197
		Ընդամենը				1320.248
2. ՋԵՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ՄԱՍՆԱՇԵՆՔ						
1	ինֆ.տե դ.	"GREEN HP 500 154 վատ" ալյումինե սեկցիաներ	սենկ	1062.00	5.771	6128.802

2	E18-112 5-1	"GREEN HP 500 154 վատ" այլումինե սեկցիաների մոնտաժում	էկմ	350.46	2.404	842.506
3	ի.տ.	Մարտկոցների կոնպլետ / խցափակի, կախիչ, նիպել, միջադիր/	կոմպ	111.00	3.006	333.666
4	E16-134 12-1	Օդահան ծորան Փ 15	հատ	111.00	2.404	266.844
5	E16-134 12-1	Կարգավորիչ փական Փ20 «ամերիկանկա» /պոլիպրոպիլեն-մետաղ/	հատ	111.00	6.012	667.332
6	E16-134 12-1	Փակող փական Փ20 «ամերիկանկա» /պոլիպրոպիլեն-մետաղ/	հատ	111.00	6.012	667.332
7	E16-262 24-1	Խողովակ Փ25 /պոլիպրոպիլեն տաք ջրի թաղանթով/ կանգնակ	մ	574.00	2.404	1379.896
8	ինֆ.տե դ.	Փ25 պոլիպրոպիլեն ձևավոր մասեր /անկ, եռաբ., խամուտ.../	հատ	126.00	1.202	151.452
9	E16-134 12-1	Կարգավորիչ փական Փ25 «ամերիկանկա» /պոլիպրոպիլեն-մետաղ/	հատ	35.00	6.012	210.420
10	E16-134 12-1	Փակող փական Փ25 «ամերիկանկա» /պոլիպրոպիլեն-մետաղ/	հատ	35.00	6.012	210.420
11	ի.տ.	Ամրակ Փ25	հատ	146.00	0.120	17.520
12	E16-261 24-1	Խողովակ Փ20 /պոլիպրոպիլեն տաք ջրի թաղանթով/ առբերիչներ	մ	364.00	2.404	875.056
13	ինֆ.տե դ.	Փ20 պոլիպրոպիլեն ձևավոր մասեր /անկ, եռաբ., խամուտ.../	հատ	418.00	0.602	251.636
14	ի.տ.	Ամրակ Փ20	հատ	485.00	0.120	58.200
15	E16-83	Պողպատե Փ60 մմ խողովակի մոնտաժում	մ	26.00	6.012	156.312
16	E16-82	Պողպատե Փ50 մմ խողովակի մոնտաժում	մ	68.00	4.810	327.080
17	E16-80	Պողպատե Փ40 մմ խողովակի մոնտաժում	մ	188.00	4.810	904.280
18	E16-79	Պողպատե Փ32 մմ խողովակի մոնտաժում	մ	268.00	3.607	966.676
19	E16-78	Պողպատե Փ25 մմ խողովակի մոնտաժում	մ	182.00	3.607	656.474
20	E15-614 164-8	Մետաղական խողովակների յուղաներկում երկու անգամ	100մ2	0.80	240.456	192.365
21	E22-362	Պողպատե ձևավոր մասեր Փ25-ից մինչև Փ60 մմ	տ	0.052	961.823	50.015
22	E16-135	Պողպատե սզոն Փ20	հատ	70.00	1.804	126.280
23	E16-135	Պողպատե սղնակ Փ 40	հատ	6.00	7.214	43.284
24	E16-135	Պողպատե սղնակ Փ 32	հատ	4.00	4.810	19.240
25	E16-220 22	Ջեռուցման համակարգի փորձարկում, փականային համակարգի կարգ-րում	100մ	14.120	4.810	67.917
26	E46-50 18-8	Անցքի բացում պատերում	հատ	72.00	1.442	103.824
27	E46-69 22-1	Անցքի վերականգնում պատերում	մ3	0.144	144.273	20.775
28	E16-261 24-1	Պոլիէթիլենե խողովակից պատյանի տեղադրում Փ40՝ 30սմ 70հատ	մ	21.00	4.810	101.010
29	E46-50 18-8	Անցքի բացում ե/բ ծածկերում 300x300 մմ.	հատ	70.00	1.442	100.940

30	E46-69 22-1	Անցքի վերականգնում ծածկերում	մ3	0.140	144.273	20.198
31	E16- 261 24-1	Պոլիէթիլեն խողովակից պատյանի տեղադրում Φ32 30սմ	մ	21.00	4.810	101.010
32	E26-16 4-3	Պողպատե Φ32 խողովակի ջերմամեկուսացում ջեր. մեկ. թաղանթով 4 գ.մ.	մ3	0.10	14.428	1.443
33	E26-16 4-3	Պողպատե Φ32 խողովակի ջերմամեկուսացում ջեր. մեկ. թաղանթով 4 գ.մ.	մ3	0.10	14.428	1.443
34	E46-99	Բետոնե հատակի քանդում	մ3	2.000	12.023	24.046
35	E6-1-2 1-1	Բետոնե հատակների վերականգնում	մ3	2.00	60.114	120.228
36	E46- 109	Պրեսգրանիտե հատակի քանդում	100մ2	0.260	120.228	31.259
37	E11-55 E11-56 40 8-1	Ցեմենտե հարթեցնող շերտի իրականացում 30սմ հաստությամբ	100մ2	0.260	264.502	68.771
38	E11- 221-1 30-7	Պրեսգրանիտե ծածկույթ	100մ2	0.260	1442.735	375.111
		Ընդամենը				16641.063

3. ԶԵՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ II ՄԱՍՆԱՇԵՆՔ

1	ինֆ.տե դ.	"GREEN HP 500 154 վատ" պլյումինե սեկցիաներ	սենկ	669.00	6.815	4559.235
2	E18- 112 5-1	GREEN HP 500 154 վատե պլյումինե սեկցիաների մոնտաժում	էկմ	220.77	2.839	626.766
3	ի.տ.	Մարտկոցների կոմպլետ/ խցավակի, կախիչ, նիպել, միջադիր/	կոմպ	81.00	3.550	287.550
4	E16- 134 12-1	Օդահան ծորան Φ 15	հատ	81.00	2.839	229.959
5	E16- 134 12-1	Կարգավորիչ փական Φ20 «ամերիկանկա» /պոլիպրոպիլեն-մետաղ/	հատ	81.00	7.100	575.100
6	E16- 134 12-1	Փակող փական Φ20 «ամերիկանկա» /պոլիպրոպիլեն-մետաղ/	հատ	81.00	7.100	575.100
7	E16- 262 24-1	Խողովակ Φ25 /պոլիպրոպիլեն տաք ջրի թաղանթով/ կանգնակ	մ	274.00	2.839	777.886
8	ինֆ.տե դ.	Φ25 պոլիպրոպիլեն ձևավոր մասեր /անկ, եռաբ., խամուտ.../	հատ	82.00	1.419	116.358
9	E16- 134 12-1	Կարգավորիչ փական Φ25 «ամերիկանկա» /պոլիպրոպիլեն-մետաղ/	հատ	16.00	7.100	113.600
10	E16- 134 12-1	Փակող փական Φ25 «ամերիկանկա» /պոլիպրոպիլեն-մետաղ/	հատ	16.00	7.100	113.600
11	ի.տ.	Անրակ Φ25	հատ	128.00	0.142	18.176
12	E16- 261 24-1	Խողովակ Φ20 /պոլիպրոպիլեն տաք ջրի թաղանթով/ առբերիչներ	մ	576.00	2.839	1635.264
